

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

ԱՐԱՏՈՍ ՍՈԼԱՑՈՒ ԵՎ ՊՈՂՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ
ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար է գերազնահատել հունական հին և միջնադարյան գրականության հուշարձանների հայերեն հին թարգմանությունների արժեքը, և այդ, ոչ միայն հայոց լեզվի ու գրականության, այլև հենց դրանց հունարեն բնագրերի ուսումնասիրության տեսակետից: Հարցն այն է, որ տվյալ թարգմանությունները, որպես կանոն, կատարված են վաղ միջնադարում, ավելի հին ժամանակներում արտագրված հունարեն բնագրերից. ուստի ավելի հին են, քան մեզ հասած հունարեն ձևագրերը: Այդ իսկ պատճառով հայերեն թարգմանությունները երբեմն հնարավորություն են ընձեռում սրբագրելու, հասկանալու և իմաստավորելու հունարեն բնագրերի առանձին աղճատված ու մտթ տեղեր:

Միջնադարյան հայ թարգմանիչներն իրենց գլխավոր ուշադրությունը բեկում էին հունական միջնադարյան (բրիտանական) գրական երկերի վրա, առաջին հերթին այդ երկերն էին թարգմանում, ունենալով որոշակի նպատակ: «Թարգմանությունների մեծ մասը,— գրում է Ս. Տեր-Ներսեսյանը,— կատարվել է որոշակի նպատակով, այն է՝ պայքարի միջոցներ ընտրել... կրոնական պրոպագանդայի համար»: «Հայերը,— շարունակում է անվանի գիտնականը,— հետամուտ են եղել այնպիսի աշխատությունների (թարգմանություններ), որոնք կարող էին հարստացնել կրոնական և մտավոր գանձարանը»¹:

Գ. Զարբհանալյանը իր «Հայերեն թարգմանությունը նախնեաց» երկում հիշում է շուրջ յոթանասուն հույն և բյուզանդացի հեղինակի անուն, որոնց երկերը միջնադարում թարգմանվել են հայերեն: Նրանց բացարձակ մեծամասնությունը վաղ միջնադարին է վերաբերում: Հին հունական (անտիկ) գրականությունն այդ ցանկում փոքր տեղ է գրավում (վարք Աղեքսանդրի, Ասկլեպիադես, Արիստոտել, Գիոնիսիոս Թրակացի, Եվկլիդես, Նեմեսիոս, Ողիմպիանոս, Պղատոն, Պորփյուր և այլն): Գ. Զարբհանալյանի գրքի լույս ընծայումից հետո հայտնաբերվեցին անտիկ շրջանի հույն հեղինակների մի քանի այլ երկերի հին հայերեն թարգմանություններ²: Բայց որոշ տվյալներ կան հավաստելու, որ աշխարհի տարբեր երկրների գրագարաններում ու մա-

¹ Ս. Տեր-Ներսեսյան, Բյուզանդիա և Հայաստան, «Պատմա-բանասիրական Հանդես», № 1, 1970, էջ 160:

² Հ. Մանեղյան, Թեոփեայ Յազգոս ճարտասանական կրթությանց, Երևան, 1938: Նույնի՝ Հերմեայ Եռամեծի առ Ասկլեպիոս սահմանանք: «Բանբեր Մատենադարանի», հտ. 3, 1956: Լ. Խաչիկյան, Չենոնի «Յազգոս բնութեան» երկի հայկական թարգմանությունը: Գիտական նյութերի ժողովածու, № 2, 1950: «Անանուն մեկնություն «Մատրոպոլիտանցն» Արիստոտելի»: Հանճավար բնագիրը Ս. Պ. Լալաֆալյանի և Վ. Կ. Չալոյանի, առաջարանը և խմբագրությունը Վ. Կ. Չալոյանի, թարգմանությունը գրաբարից ուսերեն Ս. Ս. Արեշտալյանի, Երևան, 1961: Պ. Անանյան, Ետիքիոս Կ. Պոլսոյ պատրիարքին կորսուած և անտիպ մեկ գրությունը: „Armeniaca“. Mélanges d'Etudes Arméniennes, Venise, 1969, էջ 316—354:

սոննադարաններում պահվող հայերեն ձեռագրերի մեջ դեռևս հնարավոր է հայտնաբերել մինչ այժմ անհայտ կամ ուրիշ հեղինակների (հատկապես Անանիա Շիրակացուն) վերագրված հունարեն երկերի հայերեն թարգմանություններ:

Անանիա Շիրակացին փրավամբ համարվում է միջնադարյան Հայաստանի խոշորագույն մտածողներից մեկը՝ հատկապես ճշգրիտ գիտությունների առարկերում: Նա այդ համարումն ունեցել է դեռևս միջնադարում և պատահական չէ, որ միջնադարի հայ որոշ մատենագիրներ ու գրիչներ հայերեն լեզվով առկա գիտական որևէ բնագիր առանց վարանելու վերագրել են նրան՝ քնդորինակելով այն ժողովածուներում, որոնց մեջ գետեղված են Անանիա Շիրակացու գործերը: Այդ համարումն այնքան ուժեղ է եղել, որ սովորույթի աժով անցել է ժամանակակից հետազոտողներին:

Անանիա Շիրակացու գիտական ժառանգության հավաքման ու հրատարակման գծով զգալի աշխատանք արդեն կատարված է (մենք նկատի ունենք հատկապես Ա. Աբրահամյանի երկարամյա բանասիրական աշխատանքը և հրատարակած ձեռագրական նյութերը): Սակայն այդ մեծ ժառանգության գիտական ուսումնասիրության գործի հետագա հաջողության համար, առաջին հերթին, անհրաժեշտ է սահմանազատել փսկապես Անանիա Շիրակացուն պատկանող գործերը սխալմամբ նրան վերագրվածներից: Եթե այդ գործը պատշաճ գիտական մակարդակով շիրականացվի, ապա անհնարին կլինի բացահայտել միջնադարյան նշանավոր այդ գիտնականի ժառանգության իրական նշանակությունը հետ վապված կարևորագույն շատ փնդիրներ: Քերենք մեկ օրինակ: Ի՞նչ բնորոշում կարելի է տալ մի գիտնականի, որը քննության առնելով կենդանատեսակները (զոոֆակը) քաղղեացիների «Մենդարանություն» (ասել է՝ աստղահամայություն, «սուտ գուշակութեան յօրէ և ի հանգամանաց ծննդեան ուրուք»)՝ հետևողությամբ գրում է. «Առիժն, յորում են աստեղք տասն, եթէ տեսանիցես զնոսա միածողով, գիտեա թէ թագաւորք ելանեն, և մի [ի]նոցանէն կորընչի: Եւ եթէ տեսանիցես զճանգն արիւնագոյն՝ գիտեա թէ ինքն կորնչի, զաւրքն ապրին. և արեգակն ի տարւոջն երեք անգամ խաւարի»³: Ամեն մեկս առանց վարանելու նրան աստղագուշակ կհամարեինք, այսինքն գիտության հետ առնչություն չունեցող անձնավորություն: Սակայն վերորերյալի կապակցությամբ նույն Անանիա Շիրակացին գրում է. «Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկուրդել զանհամ պատմութիւնս նոցա»⁴, այսինքն քաղղեացիների և նրանց հետևողների:

Ընթերցողն ընկնում է տարակուսանքի մեջ: Այս երկու մտքերը նույն մարդուն են վերագրված և լույս ընծայված որպես Անանիա Շիրակացու գրչին պատկանող գործեր: Քանի որ միևնույն մարդը չէր կարող այս երկու հակոտնեյա մտքերը որդեգրել, ուստի մնում է բանասիրական մանրակրկիտ աշխատանք կատարելով պարզել, թե իրականում այդ երկու բնագրերից որն է պատկանում Անանիա Շիրակացուն և որն է սխալմամբ վերագրվել նրան միջնադարյան գրիչների կամ արդի ուսումնասիրողների կողմից:

Անանիա Շիրակացուն անհարազատ երկերի լույս աշխարհ հանելու գործն

³ Նոր բողոքի Հայկազեան լեզուի, հտ. Ա, էջ 1021:

⁴ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 331—332:

⁵ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 24: Հմմտ. նույն տեղում, էջ 27:

արդեն սկսված է⁶։ Շարունակելով այդ աշխատանքը, սույն հոդվածում կանց կառնենք հին հույն հեղինակների երկու փոքրածավալ երկերի հին հայերեն թարգմանությունների վրա, որոնց հեղինակը (կամ թարգմանիչը) Անանիա Շիրակացին է համարվել։

1

ՅԱՂԱԳՍ ՄԻԱՒՈՐ ԳՆԴԻՆ, ԱՐԱՏՈՍԷ

Արատոս Սուլացին (315—240 թթ. մ. թ. ա.) հին Հունաստանի նշանավոր գիտնական-բանաստեղծներից է⁷։ Նրա բազմաթիվ երկերից բնագրով պահպանվել է միայն մեկը, 1154 հեքսամետր տողից բաղկացած *Փառնոս* և *Տուսուրեչ* պոեմը։ Այն բաժանվում է երկու մասի։ Առաջինում (1—732-րդ տող) քննության են առնվում երկնային երևույթները, երկրորդում՝ մանրամասն խոսվում է եղանակը կանխագուշակելու նշանների մասին։

Անտիկ շրջանում Արատոսը այնքան բարձր է գնահատվել, որ խնդրո առարկա պոեմը հոսմայեցիները մի քանի անգամ թարգմանել են լատիներեն, իսկ թարգմանիչներն են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Կիկերոնը, կեսար Գերմանիկոսը և Ռուֆոս Ֆեստոս Ավիենոսը։ Բայց պարզվում է, որ հոսմայեցիներից բացի, Արատոսին շատ բարձր են գնահատել նաև հայերը, դեռ վաղ միջնադարում թարգմանելով նրա մի քանի աշխատությունները, նկատի ունենալով, հարկավ, նրանց զործնական արժեքն ու նշանակությունը։ Դրանցից է նրա վերոհիշյալ պոեմի երկրորդ մասը՝ եղանակը կանխագուշակող նշանների մասին բաժինը⁸, որ մեզ է հասել «Յաղագս ամպոց և նշանաց» խորագրով, որպես Անանիա Շիրակացու հեղինակություն։

Դեռևս Գ. Տեր-Մկրտչյանը, այդ երկի հեղինակին անձանոթ, իրավացիորեն ընդգծում էր, թե «բովանդակության կողմից այս փոքրիկ գրությունը զլխովին տարբերվում է մեր տոմարագիտական-աստղաբաշխական, աստղագիտական մատենագրության մեջ եղած բազմաթիվ նման գրվածքներից։ Մա մի դուռ գիտնական գրվածք է, բոլորովին ազատ աստղագիտական-ախտարական տարրից։ Միմիայն բնական-բնագիտական բացատրություններ և մեկնություններ են տրված նշաններին։ Եվ այս մի շատ բացառիկ երևույթ է, գրեթե յուր տեսակի մեջ միակը, մեր հին մատենագիտության մեջ»⁹։

Բայց դա միակը չէր։ Բացի այս աշխատությունից, միջնադարում հայերեն է թարգմանվել Արատոսի մի այլ երկ ևս, որ հայերեն ձևագրերում հանդես է գալիս գարձյալ Անանիա Շիրակացու աշխատությունների շարքում։ Այն կրում է «Յաղագս միաուր գնդին, Արատոսէ» խորագիրը և ցարդ անտիպ է, թեև հայտնի էր դեռևս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» աշխատության հեղինակներին¹⁰։

⁶ Տե՛ս, օրինակ, Հ. Մ. Բարթիկյան, Արատոս Սուլացու *Տուսուրեչ* կամ *Սոսուրեչ* աշխատության հին հայերեն թարգմանությունը («Բանբեր Մատենադարանի», գիրք 7, 1964, էջ 331—364, Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» երկի մասին)։ Նույնի. Անանիա Շիրակացուն վերագրվող «Մամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», գիրք 8, 1967, էջ 57—76)։

⁷ Արատոսի կենսագրություն և նրա մատենագիտության մասին տես. J. Martin, Histoire du texte des Phénomènes d'Aratos, Paris, 1956. Նաև՝ Հ. Բարթիկյան, Արատոս Սուլացու *Տուսուրեչ* կամ *Սոսուրեչ* աշխատության հին հայերեն թարգմանությունը։

⁸ Նույն տեղում։

⁹ Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Ա. «Արարատ», 1896, փետրվար, էջ 99։

¹⁰ Տե՛ս «արդակեմ», «արտակետոս», «նապազեմ», «յուշախագաց», «բոցակերպ» բառերը։

Արատոսի հիշյալ գործի հայերեն թարգմանությունը (ամենայն հավանականությամբ՝ թերի) գտնվում է վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 236 ձեռագրում: Այդ երկի մի այլ ընդօրինակություն հայտնաբերել է ակադ. Լ. Ս. Խաչիկյանը Ադրբեջանական ՄՍՀ ԳԱ ձեռագրական ֆոնդի № 5030 (3) ձեռագրում, որը, ինչպես և վենետիկի ընդօրինակություն լուսանկարները նա սիրով տրամադրել է մեզ հրատարակության: Մեր հաճելի պարտքն ենք համարում հայտնել նրան խորին շնորհակալություն:

Առաջինը Գ. Զարբհանալյանն էր, որ ելնելով ձեռագրերում տվյալ երկի կրած խորագրից այն համարից Արատոսի գործի թարգմանություն և իր աշխատության մեջ նրան նվիրից ընդամենը մեկ նախադասություն. «Արատոս. Յաղագս միաւորութեան¹¹ գնդին. (աստեղաբաշխական բանք առ Շիրակացւոյն)»²:

Հին հույները երկինքը պատկերացնում էին որպես գունդ, որի վրա էին տեղադրում երկնային լուսատուները, մոլորակներն ու համաստեղությունները: Հին աշխարհում կազմվել են բազմաթիվ այսպես կոչված «Արատոսյան գնդեր», հայտնի չէ, թե ո՞ր ժամանակվանից սկսյալ¹³: Այդ մասին է վկայում VII դարի բյուզանդական դիփնակաձև («մեխանիկոս») Լեոնտիոսը իր «Արատոսյան գնդի պատրաստման մասին» երկում (Περὶ κατασκευῆς Ἀρατείας σφαιρας)¹⁴: Նրա ասելով այդ գնդերը հորինվեցին Արատոսին ավելի ճիշտ հասկանալու համար, դրա համար էլ նրա անունն են կրում (ἐπενοήθησαν μὲν αἱ τοιαῦται σφαῖραι πρὸς τὸ νοεῖν σαφῶς τὸν Ἄρατον (διὸ δὴ καὶ παρωνύμιος ἀπ' αὐτοῦ λέγονται)¹⁵: Լեոնտիոսի ասելով «պատրաստվող այդ գունդը թեև ճշմարտությունը կապարյալ իմանալու համար ամենեին էլ պիտանի չէ, բայց միանգամայն օգտակար է Արատոսի ասածները հասկանալու համար» (ὥστε καὶ ἡ κατασκευαζομένη σφαῖρα πρὸς μὲν ἀκρι[το]ν ἀλήθειαν οὐδαμῶς, πρὸς δὲ κατάληψιν τῶν Ἀρατείων καὶ πάνυ χρήσιμος)¹⁶: Ինչպես ընթերցողը կուհում է, խոսքը երկնային պարզ մի գլոբուսի մասին է (Կիկերոնի ասելով՝ sphaera solida): Նման գլոբուս ունի և Պտղոմեոսը, որն, ինչպես ցույց են տալիս անտիկ շրջանի մեկնիչները, ավելի ստույգ է, քան Արատոսյանը՝ կենդանատեսակների տեղադրման առումով¹⁷: Կիկերոնի վկայությամբ նման գունդ (գլոբուս) պատրաստել էր դեռևս Եվզոբոսս Կնիդացին (408—356 թթ. մ. թ. ա.), որի գլուտը սկիզբ է առնում Թալես Միլետացուց¹⁸: Արատոսյան գնդի մասին պատկերացում է տալիս վերոհիշյալ Լեոնտիոսը. «Արատոսյան գունդը,— գրում է նա,— պետք է պատրաստել այնպես, որպեսզի նրա վրա տեղադրված կենդանատեսակների դիրքը իրար նկատմամբ, գնդի վրա գծվող շրջանների, ինչպես և կենդանակերպի (զոոֆիակի) ծագող մասերի նկատմամբ լինի Արատոսի ասածների համաձայն»¹⁹:

Ինչպես վերևում ասացինք, հայերեն թարգմանությամբ պահպանված և

¹¹ Երկու գրագրերում էլ կարդացվում է՝ «միաւոր»: Բարձի գրագրում «միաւոր» բառից հետո կա մի հասկանալի, բայց չնշված բառ:

¹² Գ. Զարբհանալյան, հիշ. աշխ., էջ 318:

¹³ J. Martin, Histoire du texte des Phénomènes d'Aratos, p. 31.

¹⁴ S. E. Maas, Commentariorum in Aratum reliquiae, Berolini, 1898, p. 561—567.

¹⁵ E. Mass, հիշ. աշխ., էջ 561:

¹⁶ Նույն տեղում, էջ 562:

¹⁷ E. Maas, հիշ. աշխ., էջ 562; J. Martin, հիշ. աշխ., էջ 250—253:

¹⁸ J. Martin, հիշ. աշխ., էջ 32:

¹⁹ E. Maas, հիշ. աշխ., էջ 561:

Արատոսի անունը կրող այս աշխատության հունարեն բնագիրը կորած է²⁰։ Արատոսի շպահականված աշխատությունների շարքում անտիկ շրջանի հեղինակները հիշում են և Κωνών վերնագիրը կրող մի երկ²¹, որտեղ խոսվում է երկնային գնդի մասին²²։ Հնարավոր է, որ «Յաղագս միաւոր գնդին» խորագիրը կրող աշխատությունը Արատոս Սուլացու հունարեն բնագրով շպահականված երկի թարգմանությունը լինի, թեև բացառված չէ, որ մեզ հասած հայերեն փոքրիկ բնագիրը ոչ թե ուղղակի Արատոսի աշխատությունն է, այլ ավելի ուշ շրջանի մի այլ հույն հեղինակի վերաշարադրությունը։ Հայանի է, օրինակ, վերոհիշյալ Լեոնտիոսի «Արատոսյան գնդի սպարապետ մասին» երկը, ինչպես և նույն հեղինակի մասամբ սահականված աշխատությունը «Կենդանակերպի շրջանի մասին» (Περὶ ζωδαιωνώνων), որոնք ինչ-որ չափով նման են «Յաղագս միաւոր գնդին» աշխատությանը։ Հայերեն թարգմանության մեջ նկատելի է նաև քրիստոնյա հայ թարգմանչի աշխատանքը (այնտեղ հանդիպում ենք այսպիսի մի նախադասություն. «Իսկ այս գինը որ հեքանոսական անուանքդ՝ զաստեղաց խուպս կոչեն»)։

Ստորև տալիս ենք Արատոսի «Յաղագս միաւոր գնդին» աշխատության հին հայերեն թարգմանությունը ըստ Բաքվի ձեռագրական ֆոնդի ձեռագրի։ Տողատակում տրվում են տվյալ երկի Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում պահվող ձեռագրի տարբնթերցվածքները։

ՅԱՂԱԳՍ ՄԻԱՒՈՐ ԳՆԴԻՆ, ԱՐԱՏՈՍԷ:

Կենդանագիր մշտակայիցն առեղ շրջագայի, ճշմարիտ զկերպն
 152բ ցուցանէ յուշախաղաց և փոթաթուող¹։ Եւ զ[ը]նթացողսն² գիւրն արդակեալ ըստ իւրում բնութեան³ որակադրէ իբր յանդս իմն ահաւորս։ Եթէ ի վերոյ դիտեսցես ըստ մասին Եռակարգեան⁴ բաղկանալ, եթէ ի կողմանէ՝ զհակարաշն, եթէ ի ներքոյ՝ ստոյգն բաղմակերպ յոգնապատիւ իշխանակաւին։ Ելանել համարեալ բնութիւն դիրք և ձանձիւք⁵ և առ այլսն ըստ շափոյ ստորիջի պակասումն ըստ մանեակ⁶, և անդր նուագեալ բերջի⁷ ասել։

Խոյ հպեալ Եռանգիւնոյ անջրպետ միջագէտին⁸ յարտակ (Կ)Ետոսի⁹ Յուլ հպեալ Պեռսեաի¹⁰ անջրպետ միջագիտի արդակ միջոյ ճապատողի։ Եկաւոր հպեալ Ենիոբայ¹¹, անջրպետ միջակի արդակ Բոտա¹²
 151ա և Նապասաակի։ Խեցգետինն¹³ անմիջակաւ անջրպետել¹⁴ միջակիտի արդակ գլխոյ Վիշապին երկրորդի¹⁵։ Առիւծն¹⁶ անմիջակաւ անջրպետեալ միջակիտի արդակ (Կ)ոնքին¹⁷ և միջոյ Վիշապին երկրորդի։ Կոյսն անմիջակաւ անջրպետեալ միջակիտի արդակ Ագաւուն և ստան Վիշապին։

20 Հայերեն թարգմանության մեջ շոշափված հարցերին Արատոսը անդրադարձել է նաև իր Փαινոմենա պոեմի 462—558 և 559—732 տողերում, որտեղ խոսվում է երկրագնդի շրջանների, ինչպես և աստղերի ծագման ու մայր մանելու մասին։

21 E. Maas, հիշ. աշխ., էջ 42—43, 46; J. Martin, հիշ. աշխ., էջ 281։

22 Δρονδακη, Μεγαλη Ἑλληνηκη Ἐγκυκλοπαιδεια, τόμ. Ε', σελ. 335։

1) Վ. փոթաթուող։ 2) Վ. բնթացող։ 3) Վ. բնութեամբն, 4) Վ. եռակարգեան։ 5) Վ. ձանձիւք։ 6) Վ. մանեակ։ 7) բերջի։ 8) Վ. միջակիտին։ 9) Բ. յարդակետոսի, Վ. արտակետոսի։ 10) Ճիշտը՝ Պերսեաի։ Երկու գրչագրերում էլ՝ Պերսեաի։ 11) Վ. Ենի (բառը կիսատ է թողնելով)։ 12) Երկու գրչագրերում էլ սխալմամբ՝ Բոտա։ 13) Վ. խեցգետին։ 14) Վ. անջրպետեալ։ 15) Վ. ավելացնում է՝ «և Շանն»։ 16) Վ. Առիւծ։ 17) բնագրում՝ արտակոնքին, Վ. արդակ կոնքին։ 18) Վ. առգնէ (բառը կիսատ է թողնված)։

երկրորդի և Առզոնէոսի¹⁸; Բայց ոմանք ասեն զԱռզոնէոս¹⁹ հաշտեալ
 Առջոյն Մեծի ընդ միջոց Խեցգետին և Առիծոյ : Կշիւ²¹ : Հպեալ Ռոխ-
 նի²² անջրպետ միջակիտի արդակ²³ Քերոնի²⁴ : Կարին Հպեալ վիշապա-
 դօտոյն Եփիոփայ և նա Հպեալ Պսակին և Տարածելոյն և Առկառուայ,
 անջրպետեալ միջակիտին արտակ Բոցակերպին և Թիւանոնի: Ազեղ-
 նաւոր Հպե[ա]լ Արծիւոյն²⁵ և նա Հպեալ է Իւոնի²⁶, անջրպետ միջա-
 կիտի: || Այծեղջերն Հպեալ Գլֆինի² և նա Հպեալ Սագին, անջրպետ մի-
 ջակիտի արդակ Կարդածկան²⁸; Ջրնոսն Հպեալ Պիղատոսի²⁹ և նա Հպեալ
 Կեփուսի³⁰ անջրպետ միջակիտի արդակ միջոյ վիշապին Մեծի: Չկունֆ
 Հպեալ Անդրումիդայ և նա Հպեալ Կասիպայ³¹ անջրպետ միջակիտի
 [արտակ տրտանն Կիւ...: Եւ հաղորդք միջակիտի]³² Արջֆն Մեծ և Փոֆե
 և Վիշապն Մեծ, և հաղորդ սուղականին Ենզոնիաս³³ և Գաճար, և
 Զուկն Մեծ հանդերձ հնկիւք³⁴ երևելաւք³⁵ աստեղօքն հայեցելովք³⁶ ի
 յինքն: Եւ ոմանք ասեն զխուպս³⁷ սոցա ոչ առկայունս, այլ շարժունս³⁸
 լինել, բայց ամա³⁹ ձիքս: Իսկ այս զինչ որ հեթանոսական⁴⁰ անուանք՝
 զաստեղաց խուպս⁴¹ կոչեն: Եթէ ոչ հարկաւորութիւն անմարդ⁴² այ-
 լազդ⁴³ այտարարութեան⁴⁴ որպէս⁴⁵ առաջագոյն⁴⁶ հարի⁴⁷ ի նամակի: Եւ
 այս ինչ որ պծոցոյ զնդին արտաքոյ նշանակեմք օրինակ և այս ոչ ի
 գնդի, այլ ի միադէպ բոլորի և անմարթ է, զի ոչ պատշաճի: Վասն
 որոյ և երիս || առ անձն զատուցի բոլոր: Իսկ եթէ ի գունդաւորի, մարթ
 է կերպարագործեալ միաւորում: Բայց ի պարագայիցն, զոր հարկաւորի
 յինքեան խորհրդով իբրև ի տեսութենէ միշտ առնթեր բերելով հպա-
 տրութեամբ յիրաքանչիւր խմայից, ըստ գնդին շրջանակաց, ըստ ար-
 նակ(°) իւրաքանչիւր շարժմանց զթիւ համարել խառնելով զանց իւր զաս-
 տեղատանցն առանձնակութիւնսն, որպէս և ի բոլորիդ կա տպաւո-
 րեալ:

«Յաղագս միաւոր գնդին» երկում հանդիպող աստղերի,
 համաստեղությունների, կենդանատեսակների անունները և նրանց
 համապատասխան հունարեն անվանումները:

Ազոաւ — Κόραξ	Բոցակերպ — Σείριος (?)
Առզոնէոս (Արզոննիոս) — 'Αρζώ (?)	Դանոք ('Դանակ°) — Δανάη
Առկառուայ (սևո.) — 'Αρχαυόρος	Գլֆին — Δελφίς
Անդրումեղայ - 'Ανδρόμεδα	Ենզոնիաս — 'Ενζονάσι
Բոտաւ (սևո.) — Βώτας	Ենիոքայ (սևո.) — 'Ηνίοχος

19) Բ. զարդոննիոս, Վ. զարդոնն (բառը կիսատ է թողնված): 20) Վ. ընդ (բառը կիսատ է թող-
 նված) Խեցգետնոյ և Առիծի: 21) Վ. Կշիւ: 22) Բ. ոսիոնի, Վ. ոսիոնի: 23) Բ. արդակք: 24) Վ.
 Քիրոնի: 26) Վ. էիւոն: 27) Վ. գլֆինի: 28) Վ. կարդածկանն: 29) Վ. Պիղատոսի: 30) Վ. Կեփուսի
 (շիշտը՝ Կեփուսի): 31) Վ. Քասիոպեայ (ճիշտը՝ Կասիոպեայ): 32) Փակագծերի մեջ
 տեղաված բառերը բնագրում բացակայում են: Վերականգնված են Վենետիկի գրչադրի
 հիման վրա, ընդ որում «արտանն»-ից հետո եկող բառը (զուցն անունը) կիսատ է թողնված:
 33) Վ. Ենզոնի (անունը կիսատ է թողնված): 34) Վ. հնկիւք: 35) Վ. երևելաւք: 36) Վ. հպե-
 ցելովք: 37) Վ. զխուպս: 38) Վ. շարժմունս: 39) Վ. յամս: 40) Վ. հեթանոսակ (բառը կիսատ
 է թողնված): 41) Վ. բացակայում է «խուպս» բառը, որի տեղում թողնված է պարագ պարա-
 ծութիւն, իսկ հաղորդ՝ «կոչեն» բառի փոխարեն գրված է «սակ ոչ են»: 42) Վ. անմարթ:
 43) Վ. չիք «ազդ» բառը: 44) Վ. յայտարարութեան: 45) Վ. չիք «որպէս» բառը, որի տեղ պա-
 րագ տեղ է թողնված: 46) Վ. յառաջագոյն 47) Վ. չիք «հարի» բառը, որի տեղ պարագ տեղ
 է թողնված:

Եփեսոս (սևո.) — Ὀφεισῆος

Թիւսեաթոն — Θυστήριον

Իւսոն — ?

Կասիպայ (սևո.) — Κασιόπεια

Կարդածուկն — Χείρας (?)

Կետոս — Κήτος

Կեփուս — Κηφούς

Ճապատող — Ὀφεί

Նապատակ — Λαγώς

Շուն — Κύων

Ոսթոն — Ὀρείων

Պերսես — Περσείος

Պիդատոս — Πυδατίων

Պսակ — Σπέφαιος

Սագ — Κύκνος (?)

Վիշապ — Δράκων

Քիրոն — Χείρων

2

ՊԱՒՂՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՅ ԵՍԵՆՐԳԱՆ
Ի ԵՆՐՔՍԱՆՈՒԹԵՆԷ

Քերտվրե Պատկանյանն իր «Անանիա Շիրակունույ մնացորդը քանից»¹ գրքում հրատարակել է և մի երկ, որ կրում է հետևյալ խորագիրը. «Պաւղոսի Աղեքսանդրացույ նախերգան ի ներքսածութենէ յոյժ»: Բովանդակութիւնը աստղաբաշխական մի նյութ է, նվիրված կենդանատեսակներին (զոոփակին):

Ինչպես հայտնի է, Ք. Պատկանյանը խնդրո առարկա գրքին ոչ մի ուսումնասիրություն չի կցել, հետևաբար դժվար է կոահել, թե ձեռագրերում Պողոս Աղեքսանդրացու անունը կրող այս Երկասիրությունը նա ի՞նչ նկատառումներով է տեղադրել Անանիա Շիրակացուն պատկանող գործերի շարքում:

Պողոս Աղեքսանդրացին IV դ. երկրորդ կեսի նշանավոր աստղաբաշխ է, սովորել է Ալեքսանդրիայի հայտնի դպրոցում, որը V դ. վերջում գլխավորում էր Հելիոդորոսը, Պողոս Աղեքսանդրացու գործերի մեկնաբաններից մեկը: Պողոս Աղեքսանդրացու կյանքի ու գրական գործունեության մասին շատ քիչ բան գիտենք: Նա հեթանոս էր, իր ժամանակվա շատ զարգացած մարդկանցից մեկը: Կարդացել էր աստղաբաշխության և աստղագուշակության մասին մեծ թվով ուսումնասիրություններ, որոնցից մեջբերումներ կան մեզ հասած իր երկում: Այն գրված է 378 թ. և հավանաբար նախապես կրում էր *Επιστολογική* (Ներքսածականք) խորագիրը: Այս երկի երկրորդ հրատարակությունն է պահպանվել՝ ձեռնագրի հեղինակի որդի Կրոնամոնին (միջնադարում հենց այս են հայերեն թարգմանել), որի արժեքն այն է, որ հեղինակը, օգտագործած լինելով շատ հին աղբյուրներ, հնարավորություն է տալիս քրմական և ժողովրդական աստղագուշակության մասին պատկերացում կազմել: Միջնադարում Պողոս Աղեքսանդրացու երկը շատ էր տարածված: Ենթադրում են, որ հնդկական մեզ չհասած «Paulisa Siddhanta» խորագիրը կրող գիրքը Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ի մեկնությունն է եղել: Ալ-Բիրունին ծանոթ է եղել այդ մեկնությանը, որն անվանում է Pulisa:

Պողոս Աղեքսանդրացու աշխատության հունարեն բնագիրը առաջին անգամ հրատարակվեց Շատոյի կողմից 1588 թ. Վիտտեմբերգում, որից հետո նա ունեցել է քաղմարթիվ հրատարակություններ²:

Ք. Պատկանյանը ձեռքի տակ չի ունեցել Պողոս Աղեքսանդրացու գործի

¹ Ս. Պետերբուրգ, 1877, էջ 67—73:

² Մանրամասն տե՛ս W. Gundel-ի Paulus von Alexandria հոդվածը. Paulys Realencyclopädie der Classischen Altertumswissenschaft. Erste Reihe, 36. Halbband, 3. Drittel, Stuttgart, 1949, S. 2376—2386.

հունարեն բնագիրը, որն անշափ օգտակար կարող էր լինել սրբագրելու համար հայ գրիչների թույլ տված սխալները, որոնք քիչ չեն: Գրիչներին, սակայն, չի կարելի մեղադրել, քանի որ կենդանատեսակների մասին այս աշխատությունը խիստ մասնագիտական երկ է, բացի այդ այնպիսի ստրկական, տառացի թարգմանություն է կատարված (հավանաբար հունարեն դպրոցին հետևող մի անձնավորության կողմից), որ առանց հունարենի իմացության, դժվար է այն հասկանալ: Բնագրի շատ մասեր անվերծանելի են մնացել հրատարակիչ Պատկանյանի կողմից, այլ կերպ չի կարելի բացատրել նրա կիրառած կամայական կետադրությունը: Նա հաճախ նախադասության մեջտեղում վերջակետ է դրել, Պողոմեոսի, Ապողինարի աշխատությունների վերնագրերը միաձուլել է շարագրանքի մեջ և այլն: Մեր խոսքը շոշափելի դարձնելու համար բավարարվենք մեջ բերելով «Ներքսածականքի» «Նախերգանի» հունարեն բնագիրը, նրա հիման վրա մեր սրբագրած ու ճշգրտած հայերեն թարգմանությունը, ապա և Ք. Պատկանյանի հրատարակած բնագիրը (տե՛ս էջ 145):

Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ը վերահրատարակեց Ա. Արրահամյանը, լրացնելով Ք. Պատկանյանի հրատարակած բնագրի մեջ անկաթերությունները՝ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում պահպանված բնագրերի հիման վրա³: Նա հանգել է այն եզրակացության, որ խնդրո առարկա երկը գլոսիաների է բաժանել հրատարակիչ Ք. Պատկանյանը, և որ «նշված բոլոր գլոսիաներն էլ հաջորդական շարունակությունն են հանդիսանում իրար և մի ամբողջության մասեր են»: «Մեզ թվում է,— գրում է Ա. Արրահամյանը,— հենց այս էլ պիտի լինի Շիրակացու տիեզերագիտության վերջին մասը»⁴:

«Իր «Անանիա Շիրակացու մատենագրությունը» աշխատության «Շիրակացու աղբյուրները» գլխում սակայն Ա. Արրահամյանը միանգամայն ճիշտ նշել է, որ այդ աշխատությունը Շիրակացու հեղինակությունը չէ, այլ թարգմանական մի գործ, որի թարգմանիչն է Անանիա Շիրակացին:

Պողոս Աղեքսանդրացու այս աշխատությունը, հավանաբար ոչ անմիջաբար, այլ թերևս Պողոս Աղեքսանդրացու դպրոցին հետևած մի այլ հեղինակի միջնորդությամբ, օգտագործվել է Շիրակացուն վերագրվող մի ուրիշ երկում ևս, որը՝ ձեռագրերում կրում է «Անանիայի համարողի վասն ընթացից արեգական՝ ըստ կենդանատեսակացն և է գոտեացն, զոր կատարէ ի տունջե[ա]յն յաուրս ՅԿԵ և ժամս Գ» խորագիրը⁵:

Ծագման տեսակետից վերոհիշյալ երկու երկերին է հարում Ա. Ք. Պատկանյանի, Ա. Արրահամյանի կողմից նույնպես Շիրակացուն վերագրված և ձեռագրերում՝ Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ին անմիջապես հաջորդող այն փոքր երկասիրությունը, որ ունի հետևյալ վերնագիրը. «Յաղագս յատնարան աստեղաց»⁶: Այս աշխատությունը, որ ամենայն հավանականությամբ նույնպես թարգմանված է հունարենից, աստղագուշակական բովանդակություն ունի: Մեր ասածը հաստատելու համար վերցնենք պատահական մի նախադասություն. «Յուլն, յորում են աստեղք երկոտասան, եթէ հայիս և տեսանեսս զնոսա յեղջիւրս հարեալ, գիտես՝ թէ վաղվադակի լինին

³ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 327—330:

⁴ Նույն տեղում, էջ 134:

⁵ Հրատարակել է Ա. Արրահամյանը: Նույն տեղում, էջ 315—317:

⁶ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 331—333: Ք. Պատկանյանի հրատարակած բնագիրը «Մնացորդ բանից...», էջ 73—75) թերի է:

Παύλου Ἀλεξανδρέως Εἰσαγωγικά Δευτέ-
ρας ἐκδόσεως. (α') Προόμιον

Πάνω καλῶς, ὦ φίλε παῖ Κρονάμων,
ἐψευδογραφηκότες ἡμᾶς ἀνευρών ἐν τῇ πρὸ
ταύτης ἐκδόσει τῶν εἰσαγωγικῶν προετρήσω
ἐτέραν συντάξει, λειπομένην ἐν οὐδενί τῶν
εἰς τὴν αὐτῆς πρόθεσιν συντεινόντων
θεωρημάτων, μετὰ τοῦ καταναγκάσαι καὶ
τάς κατὰ Πτολεμαῖον ἀναφορὰς ἐπιλογισα-
μένους πρὸς τοῖς ἀποτελέσμασιν ἐκδέσθαι.
ὡς ταύτας ἐνχρηστοτέρας κατελιηφόντων
ἡμῶν αὐτοῦ τε τοῦ Πτολεμαίου ἐν τῷ
„Περὶ Χρόνων Ζωῆς“ αὐτοῦ τὴν
πραγματείαν ποιούμενου καὶ Ἀπολλωνίου
ρίου παρακελευομένου ἐν τῷ „Περὶ
, Ἀφέρτου καὶ Οἰκοδεσπότου καὶ
, Ἀναίρέτου“ ταύταις κέχρησθαι. προ-
σεπὶ τούτοις καὶ Ἀπολλωνίου τοῦ Λαοδι-
κέως ἐν τοῖς ἰδίοις πέντε βιβλίοις διαβα-
λοντος τοῦς Δίγυπτίους, ὡς πολλὰ ἀπάτη
αὐτοῖς γεγένηται ἐν ταῖς τῶν Ζωδίων ἀνα-
φοραῖς.

Քարգմանության
բնագիրը

Պաուլոսի Աղեքսանդրացու նախերգան
ի ներբանձութենէ յոյժ

Յոյժ գեղեցկաբար, ով որդի սիրելի
Կրանանոն, ստաղբաւու գմեղ գտեալ
յոմանց յառաջ քան զայս արտադրու-
թեան ներբանձականացն, յորդրեցեր
միւ շարադասել, նուազել ոչ իւր յայն-
ցանէ, որք ի նոյն նախադրութիւն պատ-
շաճ(ն) տեսութեան(ց), համանդամայն
հարկեցուցանելով զՊտղոմեան վերա-
բերութիւնն համեմատելով առ յանդոն
արտադրել, իրրն զայնոսիկ պիտանե-
ղին հասանելով մեր, նաև նորին իսկ
Պտղոմեայ «Յարագս ամանակաց կե-
նաց» նորք զբրազորութիւն անելով
և Ապոլինարի հրաման տալով առ ի
«Յարձակչին և Տանտեառն և Քացրար-
ձուրեան» այսորիք վարիւ: Ի վերայ
այսոցիկ և Ապոլոնի Լատղիկեցու լին-
թեան Ե (5) մատանն գորովելով գն-
գիպտացիան, որպէս թէ բազում մոլո-
րութիւն լեալ է նոցա ի կենդանատեսա-
կացն վերաբերութիւն(ս):

Քարգմանության
հրատարակված բնագիրը

Պաուլոսի Աղեքսանդրացու նախերգան
ի ներբանձութենէ յոյժ

Գեղեցկաբար ով որդի սիրելի Կրա-
նանոն, ստաղբաւու գմեղ գրեալ յո-
մանց յառաջ քան զայս արտադրութիւն
ներբանձականացն, յորդրեցեր միւ
շարադասել, նուազեալ ոչ իւր յայնցա-
նէ, որք ի նոյն նախադրութեան պատ-
շաճ ի տեսութեան համանդամայն և
հարկեցուցանելով զՊտղոմեան վերա-
բերութիւնս, համեմատելով առն
յանդոն՝ արտադրել իրրն զայնոսիկ
պիտանեղոյնն հասանելով մեր: Նա և
նորին փակ Պտղոմեայ յաղագս ամա-
նակաց կենաց՝ նորաք զբրազորու-
թիւնն անելով. և Ապոլինարի հրա-
ման տալով առ ի յարձակչին և տա-
նտեառն, և բացբարձրութեան: Այսո-
րիք վառին ի վերայ այսոցիկ. և Ա-
պոլոնի Լատղիկեցու ինքեան յառա-
ջին իւր հինգ մատանն, գորովելով
զգիպտացիան, որպէս թէ բազում մո-
լորութիւն լեալ իցէ նոցա ի կենդանա-
տեսակացն վերաբերութիւն:

պատերազմունք և կոխք»⁷: Կամ. «Աղեղնաւորն, յորում են աստեղք վեց, եթէ տեսանիցես նոսա ի Թրթումանց, գիտասշիր թէ առաքին փ նոցանէ աստեղք հանգոցնք, ծովք խոռվին, և ամսք զուարճանան և թագաւորք զուարճանան»⁸:

Այս և նմանօրինակ տասնյակ այլ գուշակողական հատվածների առկայությունը հուշում է, որ տվյալ աշխատության հեղինակը չի կարող լինել Անանիա Շիրակացին, մի գիտնական, որ բաղմիցս ծաղրուծանակի է ենթարկել նման հակագիտական հայացքները:

Պողոս Աղեքսանդրացու աշխատությունը և ձեռագրերում նրա հայերեն Թարգմանությունը հաջորդող «Յաղագս խառնարան աստեղաց» գործը, ինչպես և «Վասն ընթացից արեգակնան՝ ըստ կենդանատեսակացն...» աշխատությունը պատկանում են աստղաբաշխական միեւնույն դպրոցին: Հին հույն հեղինակները այդ գործերում արտահայտված գաղափարները վերագրում էին Բաղդեացիներին: Հետաքրքրականն այն է, որ խնդրո առարկա աշխատություններում արծարծված մտքերը հին հույները անվանում էին *γενεθλιαλογια*, այն է՝ «*Մեկ դարան ու թիւն*», ցույց տալով, որ քաղեացիները, զբաղվելով հանդերձ այդ «ծննդարանությամբ», իրենց վերամբարձորին հորջորջում էին մաթեմատիկոս և աստղագետ (*γενεθλιαλογιαν, ἢν σεμνοτέροις κοσμοῦντες ὀνόμασιν οἱ Χαλδαῖοι μαθηματικῶς καὶ ἀστρολόγους σφᾶς αὐτοῦς ἀναγορεύουσιν*)⁹: Քաղեացիներին վերագրվող աստղագուշակական հայացքները, թեև տարածում գտան անտիկ աշխարհում, բայց և սուր քննադատության ենթարկվեցին հենց անտիկ մտածողների կողմից: Այդ տեսակետից յուրահատուկ տեղ է զբաղում Սեքստոս էմպիրիկոսը (230—180 թթ. մ. թ. ա.)՝ անվանի հույն փիլիսոփա և բժիշկ, որ Պյուրրոնի և էնեսիդեմոսի հետ համարվում է սկեպտիցիզմի ամենանշանավոր ներկայացուցիչը: Սեքստոս էմպիրիկոսի աշխատությունը, որ վերնագրված է «Ընդդեմ աստղագուշակների» (*Πρὸς ἀστρολόγους*), ամբողջությամբ նվիրված է քաղեացիների աստղագիտական հայացքների քննադատությանը: Հեղինակը սկսում է իր գործը շարադրելով նախ և առաջ «կենդանատեսակ բուրրակության» (*ζωδιακὸς κύκλος*) մասին քաղեացիների սկզբունքները, հայտնում է, որ նրանք «կենդանատեսակ բուրրակությունը» բաժանում են 12 կենդանատեսակների, յուրաքանչյուր կենդանատեսակը՝ 30 մասի, յուրաքանչյուր մասն էլ 60 երմասի: Կենդանատեսակների մի մասը արական են համարում, մյուսը՝ իգական, մի մասը եղանական, մյուսը՝ ոչ, մի մասը երկտարրական, մյուսը հաստատուն և այլն: Այսպես, հաջորդաբար, նա շարադրում է այն ամենն, ինչ որ գեղբել է հետագայում Պողոս Աղեքսանդրացին, որից հետո ցույց է տալիս, թե ինչպես քաղեացիները աստղերի և կենդանատեսակների դիրքից որոշում էին, թե ինչ ճակատագիր կամ բախտ կունենա այս կամ այն աստղի տակ ծնված անձնավորությունը: էմպիրիկոսը մեկ առ մեկ ջրում է նրանց «փաստարկումները»:

Այս բուրրից հետո անհրաժեշտ է խորամուխ լինել Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» ստորև բերվող հատվածի բովանդակության մեջ. «Բայց

⁷ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 331:

⁸ Նույն տեղում, էջ 332:

⁹ *Sexti Empirici Opera*, rec. Hermannus Mutschmann, vol. III, *Adversus mathematicos*, Lipsiae, 1954, p. 141; *Sextus Empiricus with an English Translation* by the Rev. R. G. Bury, vol. IV, Cambridge—London, 1961, p. 322.

ևս կշտամբեցից զփաղեացոցն ճննդարանութիւնսն՝ որում բազումք հաւանեցան. և յունաց և այլոց ազգաց՝ վարժիլ¹⁰ սնտաիւք, և կշտամբեցից ո՛չ իմբանիս՝ այլ սրբոյն Բարսղի, որ ասէ այսպէս. Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաւաստարան ճշմարտութենէս մերմէ կշտամբեալ գտանին: Եւ արդ դարձցուք անդրէն զնորիմքք վերբատին: Եւ ահա սկսանիմ ասել իբր ո՛չ եթէ զիմ բանս ինչ խառնեմ ի ներքս, այլ ի նոցուն բանից երկրորդեմ ընդդէմ նոցա կշտամբել զնոսա անդատին յիրեանց բանիցն. զի թերևս որք կանխաւ անկան յամբարշտութիւնս նոցա՝ բժշկութիւն գտցին: Եւ որ ո՛չ իցին գայթակղեալ անկեալ ի պատուանս նոցա՝ զգուշութիւն սաասցին: Զի յայսպիսի բանս և որ նման սոցին իցեն մի՛ յօժարեացին անկանել¹¹:

Այնուհետև Շիրակացին, Սեբաստոս էմպիրիկոսի նման, հաճախ օգտագործելով նույն բառերը չրում է քաղղեացիների «ճննդարանութիւնը» հենվելով Բարսեղ Կեսարացու վրա և կրկնելով վերջինիս խոսքերը «Եւ արդ զին՝ շարից, զի իբրև հարկ իմն համարիմ երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա»¹²:

Թվում է, թե միտք շունի այլևս շարունակել: Շիրակացին քննադատում է քաղղեացիների «ճննդարանութիւնը», ինչպես իր ժամանակին քննադատել է Սեբաստոս էմպիրիկոսը և շատ ուրիշներ: Իսկ Սեբաստոս էմպիրիկոսը քննադատել է այն մտքերը, որոնք հետագայում որդեգրեց Պողոս Աղեքսանդրացին, ինչպես և անհիմն կերպով Շիրակացուն վերագրված «Յաղագս խառնարանաստեղաց» և «Վասն ընթացից արեգական՝ ըստ կենդանատեսակացն...» աշխատությունների հեղինակները: Ըստ այդմ պարզ է դառնում, որ վերոհիշյալ աշխատություններից և ո՛չ մեկը չենք կարող մեծանուն Անանիա Շիրակացու գրչի արգասիք համարել: Պարզ է ուրեմն, որ Շիրակացին աստղաբաշխությամբ գրադվող միակ հայ հեղինակը չի եղել: Հայաստանում եղել են աստղաբաշխներ, որոնք հետևել են Պողոս Աղեքսանդրացուն ու նրա համախոհներին. և այդ երկու՝ գիտական ու գուշակողական դպրոցների միջև պայքար է բորբոքվել նաև մեզանում: Այլ կերպ չի կարելի բացատրել քաղղեացիների «ճննդարանությանը» Շիրակացու տված կրքոտ քննադատությունը: Ուստի կարելի է վստահ ասել, որ Շիրակացին չէր էլ կարող վերոհիշյալ երկերի թարգմանիչը լինել, քանզի նրա համար տաղտկալի է եղել նույնիսկ նրանց անհամ պատմութիւններն երկրորդելը:

Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ը քաղկացած է Նախերգանքից և 37 գլուխներից: Ք. Պատկանյանի և Ա. Աբրահամյանի հրատարակած բնագիրը բովանդակում է այդ երկի «Նախերգանքը» և կենդանատեսակների մասին գլուխը ոչ ամբողջությամբ (վերջից պակասում է երկու պարբերություն):

Ստորև տրվում է Պողոս Աղեքսանդրացու երկի հայերեն թարգմանու-

¹⁰ Հավանաբար՝ վարիլ:

¹¹ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատասիրություններ Աշ. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 23—24:

¹² Նույն տեղում, էջ 27: Անանիա Շիրակացու՝ Բարսեղ Կեսարացու գործերից կատարած հղումների մասին տե՛ս Կ. Մ. Մուրադյան, Ընդհանուր հատվածներ ու սրբագրություններ Կեսարացու և Շիրակացու գործերում, «Լրարեք», № 1, 1975, էջ 55—216:

ΠΑΥΛΟΥ ΑΛΕΞΑΝΔΡΕΩΣ

ΕΙΣΑΓΩΓΙΚΑ

ΔΕΥΤΕΡΑΣ ΕΚΔΟΣΕΩΣ

〈α'〉 Προοίμιον

Πάνυ καλῶς, ὦ φίλε παῖ Κρονάμων, ἐψευδογραφηκότας ἡμᾶς ἀνευρῶν ἐν τῇ πρὸ ταύτης ἐκδόσει τῶν εἰσιγωγικῶν προετρέψω ἑτέραν συντάξαι, λειπομένην ἐν οὐδενὶ τῶν εἰς τὴν αὐτῆς πρόθεσιν συντεινόντων θεωρημάτων, μετὰ τοῦ καταναγκάσαι καὶ τὰς κατὰ Πτολεμαῖον ἀναφορὰς ἐπιλογισαμένους πρὸς τοῖς ἀποτελέσμασιν ἐκθέσθαι· ὡς ταύτας εὐχρηστοτέρας κατειληφόντων ἡμῶν αὐτοῦ τε τοῦ Πτολεμαίου ἐν τῷ 'Περὶ Χρόνων Ζωῆς' αὐτοῦ τὴν πραγματείαν ποιουμένου καὶ Ἀπολλιναρίου παρακελευομένου ἐν τῷ 'Περὶ Ἀφέτου καὶ Οἰκοδεσπότου καὶ Ἀναιρέτου' ταύταις κεχρηῆσθαι· προσεπιτούτοις καὶ Ἀπολλωνίου τοῦ Λαοδικέως ἐν τοῖς ἰδίοις πέντε βιβλίοις διαβάλλοντος τοὺς Αἰγυπτίους, ὡς πολλὴ ἀπάτη αὐτοῖς γεγένηται ἐν ταῖς τῶν ζῳδίων ἀναφοραῖς.

〈β'〉 Περὶ τῶν δώδεκα ζῳδίων

Ὁ ζῳδιακὸς κύκλος κινεῖται λοξῶς, διηρημένος εἰς τμήματα δώδεκα, ἅτινα καλεῖται ζῳδία. ἔχει δὲ τὸ ζῳδίων δεκανοὺς μὲν τρεῖς, μοῖρας δὲ λ̄, ἢ δὲ μοῖρα ἔχει λεπτὰ ξ. ἔστι δὲ ἡ ἀρχὴ τοῦ ζῳδιακοῦ κύκλου ὁ Κριός, ἀρσενικόν, ἰσημερινόν, τροπικόν, ἑαρινόν, οἶκος Ἄρεως, ὕψωμα Ἡλίου περὶ μοῖρας ιθ', ταπεινώμα Κρόνου περὶ μοῖρας κ', τρίγωνον ἡμέρας μὲν Ἡλίου, νυκτὸς δὲ Διός. κεῖται δὲ 〈ἐν τῷ〉 κλίματι τῷ τῆς Περσίδος, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Ἀπηλιώτῃ. κυριεύει δὲ κεφαλῆς καὶ ὄλου προσώπου. ἀνατέλλει δὲ τὸ ζῳδίων κατ' Αἰγυπτίους ἐν τῷ δι' Ἀλεξανδρείας κλίματι τρίτῳ ὄντι ἐκ τοῦ ἀφανοῦς τοῦ

Յյամբ մեզ հասած մասի հունարեն բնագիրը¹³ և նրա հին հայերեն թարգմանությունը¹⁴:

ՊԱՒՂՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԳՐԱՑԻՈՅ ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՆԵՐՔՍԱԾՈՒԹԵՆԷ՛

Յոյժ գեղեցկարար, ով որդի սիրելի Կրանամոն, ստազրաւդս զմեզ գտեալ² յոմանց յառաջ քան զայս արտագրութեան ներքսածականացն, յորդորեցիր միւս շարադասել, նուազել ոչ իւր յայնցանէ, որք ի նոյն նախագրութիւն պատշաճի[ն] տեսութեան[ց]³, համանգամայն հարկեցուցանելով զՊտղոմեան վերաբերութիւնսն համեմատելով առ յանգսն արտագրել⁴, իբրև զայնուսիկ պիտանեզոյնն հասանելով մեր, նաև նորին իսկ Պտղոմեայ «Յաղագս ամանակաց կենաց» նոքօք⁵ զիրագործութիւն առնելով, և Ապողինարի հրաման տալով առ ի «Յարձակչին և Տանուտեան և Բացբարձութեան»⁶ այսոքիւք վարիլ⁷: Ի վերայ այսոցիկ և Ապողոնի Լաւոդիկեցւոյ յինքեան Ե (5) մատեանսն դարովելով զԵգիպտացիսն, որպէս թէ բազում մոլորութիւն լեալ է նոցա ի կենդանատեսակացն վերաբերութիւն[ս]:

Յաղագս կենդանատեսակ բուրբատեսութեան⁸

Կենդանատեսակ բուրբութիւն շարժի առշեղապէս, բաժանեալ ի հատածս ԲԺ-ն (12) որ կոչին կենդանատեսակք: Եւ ունի կենդանատեսակն պարունակս Գ (3), մատունս Լ (30), և մասն ունի <մատունս Կ (60) և> մանրերորդակս Կ (60):

Յաղագս Խոյին: Արդ է սկիզբն կենդանատեսակ բուրբութիւն Խոյն, արական, հասարակօրեայ, յեղանակ[ան]⁹, զարնանային, տուն Հրատի, բարձրութիւն Արեգականն [մասանց]¹⁰ ԺԺ (19), նուաստութիւն Երեակի՝ մասանց Ի (20), եռանգիւնի՝ ի տուրնչեան Արեգականն, իսկ ի գիշերի՝ Լուսնթագի: Չանեալ է նահանգին Պարսից, բաժանաւ¹¹ հողմոյն Արեւելականի: Եւ տիրել զլիսոյ և բուրբ երեսացն: Եւ ելանէ կենդանատեսակ ըստ Եգիպտացոցն և Ազեքսանդրացոցն նահանգին, որ է երկրորդ¹², յաներևութէն յերևելի աշ-

13 Պոզոս Ազեքսանդրացու երկի հունարեն բնագրի նորագույն հրատարակությունը լույս է տեսել Լայպցիգում, 1958 թ. Paulus Alexandrinus. Εισαγωγή. Edidit A. e. Boer Lipsiae, 1958.

14 Որպես հիմք ընդունված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 1973 ձեռագիրը:

[] Անկյունավոր փակագծերի մեջ առնված տառերն ու բառերը ավելացրել ենք մենք՝ հիմնը վելով հունարեն բնագրի վրա: Սուրանկյուն փակագծերի մեջ (<>) առնված են այն տառերն ու բառերը, որոնք կան հայերեն բնագրում, բայց որոնք համարում ենք ավելորդ:

